Սերոբ Անտինյան

Հանրային կառավարման մասնագետ,
փորձագետ, վերլուծաբան

Զ Ե Կ Ո Ւ Յ Ց

ՀԱՆՐԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ԷԹԻԿԱՆ. ՄԱՍՆԱՎՈՐԻ, ԱՆՁՆԱԿԱՆԻ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆԻ ՀԱՏՈՒՅԹՆԵՐԸ: ԻՆՔՆԱԿԱՄ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՈՒՄՆԵՐԻ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՈՒՄԸ

ԵՆԹԱԹԵՄԱՆԵՐ

1. Հանրային տարածք. սահմանումը, մեկնաբանությունները
2. Հանրային տարածքի իրավունքը և էթիկան
3. Հանրային տարածքների օգտագործման օրենսդրական հիմքերը (իրավակարգավորումները) Հայաստանի Հանրապետությունում
4. Հանրային տարածքի «հանրային» ընկալումը, հետխորհրդային մշակույթի (ընկալման) իներցիան, ինքնակամներ: Մասնավորի, անձնականի և հանրայինի հատույթները: «Առաձգական» իրականություն
5. Մասնակցային կառավարում, կամ «Մենք ենք տերը մեր երկրի»

Նախաբան

Քաղաքային համակեցության մշակույթի ընկալման և մեկնաբանման համատեքստում «հանրային տարածքը» կարևորագույն հասկացություններից է: Սահմանազատվելով մասնավոր (անձնական) տարածքներից, այն քաղաքային կյանքի մասնակիցների (քաղաքաբնակների) համար հանդես է գալիս որպես հաղորդակցության ընդհանուր հարթակ, միջավայր, ֆիզիկական տարածք[1]: Ըստ այդմ, հանրային տարածքի հանդեպ նրանց վերաբերմունքն ու

[1] Հետազոտության մեջ չեն շոշափվում հանրային տարածքի՝ որպես վիրտուալ տարածության մեկնաբանությունները (մամուլ, լրատվություն, սոցիալական ցանցեր և այլն)

կենսադիրքորոշումը պայմանավորում են այդ տարածքի որպիսիությունը, այնտեղ տիրող մշակույթը, էթիկայի ու վարքագծի նորմերը: Այս առումով, հանրայն տարածքը հանդես է գալիս որպես սոցիալական տարածության տարատեսակ, որը քաղաքային կյանքի մասնակիցների համար յուրահատուկ սոցիալական հաղորդակցման (վերբալ, կինետիկ, վիզուալ) և փոխազդեցության միջավայր է:

Մյուս կողմից, հանրային տարածքը ֆիզիկական (աշխարհագրական) տարածություն է, որն իբրև անշարժ գույք (հող, շինություններ և այլն) ունի իրավական կարգավիճակ, սեփականություն, նպատակային նշանակություն և այլն: Ըստ այդմ, այդ տարածքի հետ բնակիչների ունեցած առնչությունները ենթակա են իրավակարգավորումների՝ իբրև հանրային կառավարման օբյեկտի: (Հանրային տարածքի իրավունք)

Հարկ է փաստել, որ «հանրային տարածքի» հասկացությունը հայաստանյան քաղաքական-հասարակական դիսկուրսում նոր է: Այն ի հայտ է եկել և շրջանառության մեջ դրվել վերջին տասնամյակում, երբ հետխորհրդային ժամանակաշրջանում նոր շուկայական հարաբերություններով պայմանավորված տարերային մասնավորեցումների դեմ սկսեցին հանդես գալ առանձին հանրային շահերի խմբեր և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ: Հանրային ընդհանուր շահի գիտակցմամբ պայմանավորված այդ «ընդվզումը» և դրան հաջորդած քաղաքացիական շարժումները (Մաշտոցի պուրակի օրինակով) կարևոր շրջափուլ էին հանրային տարածքի՝ որպես հանրային բարիքի գիտակցման, ընկալման համատեքստում և մեր հանրության՝ հանրույթից հասարակություն փոխակերպման գործընթացներում (սոցիալական կամք, հանրային ընդհանուր շահ և այլն):

1. Հանրային տարածքի սահմանումը, մեկնաբանությունները

Գիտական շրջանակներում «հանրային տարածքի» հասկացությունն ունի լայն ընդգրկում: Ըստ այդմ տարբեր են այդ եզրույթի սահմանումները և մեկնաբանությունները: Հանրային տարածքները դիտարկվում են իբրև քաղաքական, սոցիալական և մշակութային հաղորդակցության հարթակներ, հրապարակային միջոցառումների, ծիսական, կրոնական, խաղային գործառույթներ կատարող միջավայրեր և այլն:

Ընդհանուրն այն է, որ հասկացության գրեթե բոլոր գիտական ընկալումներում և մեկնաբանություններում «հանրային տարածքը» հակադրվում է «մասնավոր տարածքին» և ներկայանում իբրև հարաբերականորեն բաց և բոլորի համար հասանելի միջավայր, տարածություն, որտեղ տեղի են ունենում կոմունիկացիոն բազմապիսի գործընթացները և որտեղ

մեծ հաշվով ի հայտ է գալիս քաղաքային համակեցության մշակույթն իր զանազան դրսևորումներով:

«Հանրային տարածք» հասկացությունը գիտական շրջանակներում առաջին անգամ կիրառել է գերմանացի (ազգությամբ հրեա) փիլիսոփա և մտածող, քաղաքական տեսաբան և պատմաբան **Հաննա Արենդտը (1906-1975)**[2]**:** Տարանջատելով «հանրային տարածքը» (հանրային տարածությունը, միջավայրը – public sphere) մասնավորից, Արենդտը պարտադիր էր համարում այն անհատի համար, իբրև գործողության, արտահայտվելու միջավայր, որտեղ ընդգծվում է նրա անհատականությունը, ինքնատիպությունը[3]:

Հանրային տարածքի, հանրային միջավայրի մյուս նշանավոր հետազոտող գերմանացի սոցիոլոգ, փիլիսոփա **Յուրգեն Հաբերմասը (ծնվ. 1929)** հանրային տարածքը բնորոշում է իբրև քաղաքական հաղորդակցության ֆիզիկական տարածություն: Հանրայինի և մասնավորի հակադրությունը Հաբերմասը տեսնում է պետության և հանրության հակադրության համատեքստում, ըստ այդմ պետությունը՝ որպես հանրային իշխանություն պետք է հոգ տանի քաղաքացիների ընդհանուր բարեկեցության մասին, միևնույն ժամանակ իրականացնի վերահսկողություն այդ տարածքների նկատմամբ նրանց հասանելիության, մատչելիության ապահովման նկատմամբ[4]:

Հայկական գիտական շրջանակներում «հանրային տարածքին» նվիրված հետազոտություն է իրականացրել **Լևոն Մարգարյանը**[5]: Ատենախոսությունը նվիրված է «հանրային տարածք» հասկացության սահմանմանն ու մեկնաբանություններին, ինչպես նաև այդ եզրույթի կիրառումներին արդի քաղաքային միջավայրում տեղ ունեցող սոցիալ-մշակութային կոնկրետ գործընթացներում: Մարգարյանը նշում է, որ «հանրային տարածքի» հասկացությունն ու դրա շուրջ հայաստանյան դիսկուրսը ծնունդ առավ հետխորհրդային կամ արդի ժամանակահատվածում, ինչը պայմանավորված էր տնտեսակարգի և քաղաքական կարգի նոր մոդելների անցմամբ: Հայաստանում գլխավորապես պետական-հասարակական համարվող սեփականությունը վերանայվեց (սեփականաշնորհում և ապապետականացում), ինչի հետևանքում դրա մի մասը օտարվեց և դարձավ առանձին ֆիզիկական կամ իրավական անձանց սեփականությունը: Մասնավորեցվող արդյունաբերական, սպասարկող ձեռարկությունների,

[2] Х. Арендт, «О деятельной жизни» (Vita Activa, 1958)

[3] Н. Лебедева, Терапия публичного человека: От Арендт к Сеннету, Рецезия на книгу: Сеннет Р. Падение публичного человека., 2012

[4] Ю. Хабермас, «Теория коммуникативного действия» (Theorie des kommunikativen Handelns, Suhrkamp, 1981),

[5] Մարգարյան Լ. Ն., «Հանրային տարածքների փոխակերպումը Երևանում», «Ազգագրություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2016

կրթական, բնակելի և այլ տարածքների թվում հայտնվեցին նաև Խորհրդային շրջանում որպես հանգստի և ժամանցի գոտի ծառայող բացօթյա տարածքները՝ այգիները, պուրակները, բակերը, կամ դրանց մաս կազմող առանձին հատվածները, ինչը մասնակիորեն շարունակվում է նաև այսօր: Անկախության առաջին երկու տասնամյակներում նշված գործընթացը ընդգծված դիմադրության չէր արժանանում և բուռն բանավեճերի ու քննադատության առիթ չէր: Կարծես ամեն ինչ տեղի էր ունենում լռելյայն կերպով և հասարակական անհասկանալի փոխհամաձայնությամբ: Սակայն, հատկապես 2010թ-ից սկսած, քաղաքացիական տարբեր խմբեր և միավորումներ ընդդիմանում են մասնավորեցմանը և, կարելի է ասել, հասարակական այդ տարածքների պահպանության համար մղվող պայքարը դառնում է հայաստանյան օրակարգային և առանցքային թեմաներից մեկը արդի շրջանում: Այդ պայքարի համատեքստում է, որ ասպարեզ է իջնում և շրջանառություն է ստանում ***«հանրային տարածք» հասկացությունը***[6]:

2. Հանրային տարածքի իրավունքը և էթիկան

Citatum: *As last year's occupations showed, cities need more places the public can call its own.*

Richard Sennett

Հանրային տարածքի իրավունքը այդ տարածքի գործառնական ասպեկտին առնչվող կոնցեպտուալ հարցերից մեկն է: Իրոք, ո՞ւմ են պատկանում հանրային տարածքի նկատմամբ իրավունքները՝ դրա ստեղծման, օգտագործման, վերահսկման, պահպանման և պաշտպանության առումներով:

Հարցը երկակի կարևոր է: Մի կողմից այն ուղղակիորեն առնչվում է պետություն-հասարակություն (պետություն-քաղաքացի) հարաբերություններին, այդ հարաբերությունների իրավական, քաղաքական, ժողովրդավարական կողմերին: Ժողովրդավարական երկրներում **իշխանությունը պատկանում է ժողովրդին** (ՀՀ սահմանադրություն, հոդված 2-րդ, անփոփոխելի!): Իշխանության միակ աղբյուրը ժողովուրդն է: Արդյո՞ք ժողովուրդը (տվյալ

[6] Նույն ատենախոսությունը, էջ 3

դեպքում՝ քաղաքային բնակչությունը) իր իշխանությունը պատվիրակելով տեղական իշխանություններին զրկվում է հանրային տարածքների նկատմամբ իրավունքներից կամ դրանց մի մասից: Մյուս կողմից, պետական (ՏԻ) մարմինները օժտվելով հանրային տարածքների նկատմամբ որոշումներ կայացնելու իրավասությամբ, ի՞նչ պարտավորություններ են ստանձնում դրանց պահպանման, պաշտպանության, նպատակային օգտագործման և վերահսկման հետ կապված, ի՞նչ պարտականություններ ունեն այս առնչությամբ և ի՞նչ պատասխանատվություն են կրում հանրության առջև վերը նշվածը պատշաճ չկատարելու դեպքում:

Արդեն հիշատակված գերմանացի փիլիսոփա և սոցիոլոգ **Յուրգեն Հաբերմասը** դիտարկելով *պետությունը որպես «հանրային իշխանություն»*, որը պարտավոր է հոգ տանել իր քաղաքացիների բարօրության համար, միևնույն ժամանակ առանձնացնում է երկու տեսակ հանրություններ՝ ***«ուժեղ» և «թույլ»***: Առաջինը պետական ինստիտուտներն են, որոնք ֆորմալ են, կազմակերպված են, օժտված են որոշումներ ընդունելու լիազորությամբ: Երկրորդը՝ ոչ ֆորմալ ու անկազմակերպ հանրույթն է, որը ձևավորում է հանրային կարծիք, բացահայտում է հանրային կարևորության խնդիրները, սակայն չունի որոշումներ կայացնելու պարտականություն:

Որոշ գիտնականներ, սակայն, քննադատելով Հաբերմասի հասարակության բաժանումը «ուժեղ» և «թույլ» մասերի, գտնում են, որ քաղաքացիական հասարակությունը օժտված է պետության աշխատանքը քննադատելու և լիարժեքորեն վերահսկելու կարողությամբ, և որ այն ամենևին էլ «թույլ» և որոշումեր կայացնելու պարտականությունից զուրկ չէ **(Ենսի Ֆրեյզեր)**: Դիտարկելով խնդիրը ***«ճանաչման համար պայքարի»*** պարադիգմայում, այդ գիտնականներից ոմանք **(Աքսել Հոններթ)** նշում են, որ իրավունքների համար մղվող քաղաքական և սոցիալական պայքարը հանգեցրել է ժամանակակից հասարակության մեջ անհատի ունիվերսալիզացիայի և դեֆորմալիզացիայի, ինչը հնարավոր է դարձրել մարդկանց ինքնահարգանգը (самоуважение), ինքնագնահատումը և հարգանքը այլոց նկատմամբ՝ իբրև ինքնավար, ինքնորոշվող սուբյեկտների (բարոյական առումով) և քաղաքացիների (իրավական առումով): Այս մոտեցումը աներկբա հանգեցնում է տվյալ սոցիումի (խմբի) համերաշխությանը, ընդհանուր արժեքների և նպատակների շուրջ համախմբվածությանը[7]:

Սա բացառիկ կարևոր գիտական կոնցեպտ է, քանի որ կառուցվում է այնպիսի տեսությունների վրա, որոնք *մերժում են հասարակությունը, պետությունը իբրև առանձին անհատների մասնավոր շահերի ամբողջությունը «սպասարկելու» համար «հասարակական պայմանագրով» ստեղծված «սոցիալական գործիքներ», այլ դիտարկում են դրանք իբրև ամբողջական, ամփոփ համակարգեր (ինստիտուտներ), որտեղ լիարժեք դրսևորվում են*

[7] Берт ван ден Бринк, Парадигма признания в социальной философии: Аксель Хоннет; статья, перевод с англ., Институт социальных и политических наук, 2014.

առաջնային սոցիալական հարաբերությունները (սեր, հարգանք, հեղինակություն): Այսպիսով, **«Ճանաչման տեսությունը» (Теория признания) հանդես է գալիս որպես էթիկայի փիլիսոփայություն**՝ համընդհանուր բարիքի ստեղծման անհրաժեշտությամբ պայմանավորված:

Հետաքրքրական է ամերիկացի նշանավոր ուրբանիստ և սոցիոլոգ, Լոնդոնի տնտեսագիտության և քաղաքագիտության դպրոցի սոցոլոգիայի և Նյու Յորքի համալսարանի հումանիտար գիտությունների պրոֆեսոր **Ռիչարդ Սեննեթի** (ծնվ. 1943թ.)[8] դատողություններն ու եզրահանգումները հանրային տարածքի պատկանելիության, դրա նկատմամբ իրավունքի համար պայքարի, այս ամենի իրավաքաղաքական և էթիկական կողմերի հետ կապված:

2011 թ. սեպտեմբերի 17-ին Նյու Յորքում քաղաքացիական ընդվզման հզոր շարժում սկսվեց, որը պատմության մեջ մտավ ***«Գրավիր Ուոլ Սթրիթը» (Occupy Wall Street)*** անվանումով:[9] Շարժման (ակցիայի) մասնակիցների խնդիրը Նյու Յորքի գլխավոր ֆինանսական փողոցի՝ Ուոլ Սթրիթի գրավումն էր՝ երկրի տնտեսական ու ֆինանսական էլիտայի կողմից իրականացրած չարաշահումների և հանցագործությունների վրա հանրության ուշադրության գրավելու նպատակով: Հետաքրքրական է, որ ակցիայի մասնակիցները չունեին ընդգծված լիդեր (շարժման ղեկավար), տարբեր ինքնավար խմբեր միավորվել էին «տիրող անարդարության և կամայականությունների» դեմ և ներկայացնում էին տարբեր պահանջներ (ցանցային պայքար): Մասնակիցներին հաջողվել էր գրավել հաղորդակցության համար մեծ կարևորություն ունեցող փողոցը, ստանալ ԱՄՆ խոշոր արհմիությունների և մի շարք այլ խմբերի աջակցությունը: Սակայն շարժումը դադարեցվեց հոկտեմբերի 1-ին ԱՄՆ ոստիկանական ուժերի գործողությունից հետո, ձերբակալվեց ավելի քան 700 մարդ: Անկախ արդյունքներից, քաղաքացիական ընդվզումը հետաքրքիր և կարևոր նշանակություն ունեցավ թե հանրային տրամադրությունների վերլուծության և նկատի առնման, թե գիտական ուսումնասիրության տեսանկյունից:

Վերլուծելով «Գրավիր Ուոլ Սթրիթ» շարժումը տարբեր դիտանկյուններից և մանրամասն ներկայացնելով դրա իրավաքաղաքական և սոցիալ-հոգեբանական ասպեկտները, պրոֆեսոր **Ռիչարդ Սեննեթը,** իր ***«Տարածքի մասին նոր տեսակետներ» հոդվածում***[10] նշում է, որ շարժումը հստակորեն մատնացույց է անում հանրային տարածքին վերաբերող ամենակարևոր հարցը՝ *այնուհանդերձ, ո՞ւմ է պատկանում այն: Ո՞վ իրավունք ունի դրանցից օգտվել:* Եվ տալիս է որոշ հետաքրքրական և ուշագրավ պատասխաններ:

---

8 Որպես սոցիոլոգ և ուրբանիստ՝ Սեննեթը հայտնի է իր «Հանրային մարդու անկումը աշխատությամբ, (The Fall of Public Man, 1977)

9 https://en.wikipedia.org/wiki/Occupy_Wall_Street

10 New Ways of Thinking About Space, Richard Sennett, The Nation, 05.09.2012, https://www.thenation.com/article/new-ways-thinking-about-space/

Նշելով, որ բողոքի գործողությունները տեղի են ունեցել այնպիսի տարածքներում, որոնք դրա համար օրենսդրորեն արգելված էին (հրապարակներ, եկեղեցու հարակից տարածքներ, առևտրային տարածքներ և այլն), Սեննեթը այնուհանդերձ եզրահանգում է՝ բողոքի ակցիայի իրագործումն այդ տարածքներում չի հակասում մարդկանց հիմնարար ազատությունների արտահայտման կոնցեպտին, և որ *ուրբանիզացիայի գործընթացում տեղի են ունեցել այդ իրավուքների ազատ արտահայտմանը խոչընդոտող* ***ինստիտուցիոնալ գործընթացներ***: Տեղական մակարդակներում օրենսդրորեն Էապես նեղացվել և կրճատվել են այն տարածքները, որոնց կարող էին հանդես գալ որպես այդ իրավունքների իրացման երաշխիքներ: Հետևապես, լիովին իրավաչափ պիտի համարել տեղի ունեցող բողոքի գործողության իրականացման ձևերն ու եղանակները: *(Համեմատական եզրերի անցկացում Թավշյա հեղափոխության ընթացքում քաղաքացիական խաղաղ անհնազանդության գործողությունների հետ)*

Սեննեթը նշում է, որ օրենսդրությամբ ***քաղաքացիներին տրված հիմնարար իրավունքները*** (խոսքի ազատության, հավաքների ազատության և այլն) ***«քաղաքը կարող է նրանցից խլել»*** և հենց այստեղ պետք է որոնել հանրային տարածքների նկատմամբ քաղաքացիների իրավունքի լիարժեք իրացման իրավական և իրավաքաղաքական լուծումները:

Հենց այստեղ է այն նուրբ բալանսը մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների երաշխավորման և տեղական մակարդակում այդ ամենի գործնական իրագործման հնարավորության միջև, երբ գործնականում կյանքի է կոչվում «հանրային տարածքի իրավունքը»: «Վերջին տարիների օկուպացիաները ցույց են տալիս, որ քաղաքները կարիք ունեն ավելի շատ տարածքների, որոնք հանրությունը կարող է համարել իրենը» - եզրահանգում է հեղինակը:

Ամփոփելով վերը նշվածը եզրակացնենք:

1. Հանրային տարածքը քաղաքային համակեցության կարևորագույն բաղադրիչներից է
2. «Հանրային տարածք» հասկացությունը հայաստանյան գիտական և հասարակական դիսկուրսում նոր երևույթ է՝ պայմանավորված մեր հանրության մեջ քաղաքացիական հասարակության ձևավորմամբ, այդ հասարակության առավել ակտիվ և նախաձեռնող հատվածի կողմից ընդհանուր հանրային շահի, հանրային բարիքի գիտակցմամբ, արժևորմամբ և այդ շահերի գործուն պաշտպանությամբ:
3. Հանրային տարածքի իրավունքը (այդ տարածքների ստեղծման, օգտագործման, պահպանության և վերահսկման իրավունք) քաղաքական, իրավական, տնտեսական, սոցիալ-հոգեբանական, մարդաբանական, բարոյական (էթիկա) և փիլիսոփայական լայն և համալիր կատեգորիա է, որը քննության է առնվել (և առնվում է ներկայումս) բազմաթիվ գիտնականների ու գիտական շրջանակների կողմից:
4. Արդի գիտական տեսությունները հակված են հանրային տարածքի իրավունքը դիտարկել ազատ քաղաքացիների սոցիալական, քաղաքական և մշակութային այլ իրավունքների հետ համատեղ՝ մեկ ամբողջության մեջ: Խոսքը վերաբերում է թե՛ այդ իրավունքի ծագմանը, թե՛ դրա լիարժեք ու ամբողջական իրացմանը:
5. Մեր երկրի և, մասնավորապես, Երևան քաղաքի պատմության մեջ հանրային տարածքների համար պայքարն, ըստ էության, հասարակական նոր երևույթ է: Հանրային տարածքների համար և նաև հանրային տարածքների օգտագործմամբ իրականացվող քաղաքացիական շարժումները և միջոցառումները՝ կազմակերպչական, գործառութային, կառուցվածքային և խորհրդանշանային տեսանկյուններից մեր իրականությունում նույնպես սոցիալ-մշակութային նորահայտ երևույթ են, և կարիք ունեն գիտական համակողմանի ուսումնասիրության: Անհրաժեշտ է հետազոտել նաև արդի փուլում հասարակության հանրային ընկալումներում տեղի ունեցած այն փոփոխությունները, որոնք պայմանավորում են վերոհիշյալ գործընթացները:

3. Հանրային տարածքների օգտագործման օրենսդրական հիմքերը (իրավակարգավորումները) Հայաստանի Հանրապետությունում

Հանրային տարածքի պահպանության և օգտագործման հարցերը ՀՀ օրենսդրությամբ ընդհանուր առմամբ կարգավորված են:

ՀՀ սահմանադրության 12-րդ հոդվածը սահմանում է ***պետության ուղղակի պարտականությունը*** խթանել շրջակա միջավայրի պահպանությունը, բարելավումը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը՝ ղեկավարվելով կայուն զարգացման սկզբունքով և հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև[11]: Նույն հոդվածի 2-րդ մասը պարտավորեցնում է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին ***յուրաքանչյուրին***[12]: Նկատենք, որ Սահմանադրության 1995 և 2005 թվականների տարբերակներում վերջին դրույթը ամրագրված չէր և շրջակա միջավայրի պահպանության պարտականությունը վերապահված էր միայն պետությանը: Օրենսդրական նման «էվոլյուցիան» խոսում է շրջակա միջավայրի՝ որպես հանրային բարիքի առավել ընդգծված ընկալման և մեկնաբանման մասին: Չկար նաև այդ պարտականության և «կայուն զարգացման», ինչպես նաև «ապագա սերունդների առջև պատասխանատվության» փոխադարձ կապն ու հարաբերությունները պայմանավորող ձևակերպումները, ինչը նույնպես ողջունելի է և խոսում է ընդգծված քաղաքական դիրքորոշման մասին:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-217, 05.05.1998) 12-րդ հոդվածը սահմանում է քաղաքաշինական գործունեության իրականացմանը հասարակության մասնակցության նպատակները: Ըստ այդմ հասարակությունը մասնակցում է քաղաքաշինությանը պետության, հասարակության և քաղաքացիների շահերի փոխհամաձայնեցման, այդ գործունեության հրապարակայնության ապահովման, ինչպես նաև քաղաքաշինական ծրագրերի և նախագծերի լավագույն լուծումներ ապահովելու նպատակներով[13]: Նույն օրենքը սահմանում է քաղաքաշինական գործունեության ընթացքում հասարակության ներկայացուցիչների իրավունքները: Ըստ այդմ, նրանք (հասարակության ներկայացուցիչները) իրավունք ունեն անհրաժեշտ և ստույգ տեղեկություններ ստանալ իրենց ***կենսագործունեության միջավայրի*** ծրագրվող փոփոխությունների մասին, մասնակցել քաղաքաշինական ծրագրերի և նախագծերի քննարկումներին, փորձաքննության ենթարկել դրանք, ներկայացնել առաջարկություններ, այլընտրանքային ծրագրեր և նախագծեր, ինչպես

[11] ՀՀ սահմանադրության փոփոխություններ, հոդված 12, 1-ին մաս, 2015

[12] Նույն տեղում, մաս 2-րդ

[13] «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք, հոդված 12

նաև դատական կարգով գանգատարկել պետական և ՏԻ մարմինների ու պաշտոնատար անձանց գործողությունները: Վերջիններս իրենց հերթին պարտավոր են ապահովել քաղաքաշինական գործունեության իրականացմանը հասարակության ներկայացուցիչների մասնակցությունը[14]:

Տարածքային կառավարման և ՏԻ մարմինները պարտավոր են նաև ՁԼՄ հրապարակումներով, հասարակական քննարկումներով, ծրագրերի և նախագծերի ցուցադրման միջոցառումներով իրազեկել ֆիզիկական և իրավաբանական անձանց կենսագործունեության միջավայրի, տարածքի գոտևորման և քաղաքաշինական նախատեսվող այլ փոփոխությունների մասին[15]:

Օրենսդրության նշված նորմերով խոշոր հաշվով կարգավորվում են հանրային տարածքների պահպանության և օգտագործման նկատմամբ պետական, ՏԻ կառավարման մարմինների, մի կողմից և հասարակության ներկայացուցիչների՝ ՀՀ քաղաքացիների՝ մյուս կողմից իրավունքները և պարտականությունները, ինչպես նաև հաշվետվողականության հիմքերը և մեխանիզմները:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքով կարգավորված են համայնքի կամ դրա առանձին հատվածների տարածքների, հողամասերի և այլ անշարժ գույքի օգտագործման պարտադիր պահանջները՝ դրանց *իրավական ռեժիմին, նպատակային ու գործառնական նշանակությանը, թույլատրված օգտագործումներին համապատասխան* (***տարածքների գոտիավորում***): Ըստ որում, գոտիավորմամբ սահմանված պահանջները տարածվում են անշարժ գույքի բոլոր օբյեկտների վրա և պահպանում են իրենց ուժը սեփականատերերի կամ օգտագործողների փոփոխման դեպքում[16]: Օրենքով սահմանված են գոտիավորման սկզբունքները, համաձայն որոնց «պետական և համայնքային սեփականության հողամասերի օտարումը և օգտագործման տրամադրումը, հասարակության կամ պետական կարիքների համար գույքի օտարումը, ինչպես նաև հողամասերի կառուցապատումը, ճարտարապետահատակագծային առաջադրանքում, շինարարության և քանդման թույլտվություններում քաղաքաշինական սահմանափակումների ու սերվիտուտների և այլ պարտադիր պահանջների սահմանումն իրականացվում են գոտիավորմամբ սահմանված նորմերի հիման վրա՝ հողամասերի նպատակային ու գործառնական նշանակությանը, դրանց օգտագործման իրավական ռեժիմին և թույլատրված օգտագործումներին

[14] «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք, հոդված 13

[15] Նույն տեղում, հոդված 14

[16] Նույն տեղում, հոդված 14[1], 1-2 պարբերություններ

(կառուցապատումներին) համապատասխան: Գոտիավորմամբ սահմանված պահանջներին հակասող քաղաքաշինական գործունեությունն արգելվում է:»[17]:

Օրենքը սահմանում է նաև գոտիավորման տեսակները՝ ըստ հողերի նպատակային նշանակության, ըստ քաղաքաշինական, բնապահպանական, պատմամշակութային, գյուղատնտեսական, ինժիներաերկրաբանական և այլ բնույթի սահմանափակումների:

Նշված իրավակարգավորումները փաստում են, որ հանրային տարածքների պահպանության և օգտագործման հարցերը վերապահված են պետական (ՏԻ) մարմիններին, որոնց գործունեության շրջանակները սահմանափակված են տարբեր նորմատիվներով, քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերով, կառուցապատման չափորոշիչներով:

Տեղական մակարդակում հանրային տարածքների պահպանության և օգտագործման հարցերը մանրամասն կանոնակարգված են **«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով (ՀՕ-337, 07.05.2002):** Մասնավորապես, Օրենքով համայնքի ղեկավարի համար ***քաղաքաշինության և հողօգտագործման բնագավառում*** սահմանված են պարտադիր լիազորություններ: «Ղեկավարը՝

- կազմում և սահմանած կարգով համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը՝ համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագիծը և քաղաքաշինական գոտիավորման նախագիծը կամ դրանց փոփոխություններն ու նախագծման առաջադրանքները:
- քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին համապատասխան՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կառուցապատողներին տալիս է ճարտարապետահատակագծային առաջադրանք (կամ նախագծման թույլտվություն
- օրենքով սահմանված դեպքերում և կարգով համայնքի բնակչությանն իրազեկում է միջավայրի ծրագրվող քաղաքաշինական փոփոխությունների մասին.
- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով համաձայնեցնում է ճարտարապետաշինարարական նախագծերը, տալիս է շինարարության (քանդման) թույլտվություն, միջոցառումներ է ձեռնարկում շինարարության թույլտվությամբ նախատեսված ժամկետներում կառուցապատումն ավարտելու համար.
- օրենքով սահմանված կարգով ձևակերպում է շինարարության ավարտական ակտ, ինչպես նաև տրամադրում է ավարտված շինարարական օբյեկտի շահագործման թույլտվություն.
- կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը.

[17] Նույն տեղում, հոդված 14[1], 2-3 պարբերություններ

- օրենքով սահմանված կարգով վերահսկողություն է իրականացնում շենքերի ու շինությունների նպատակային օգտագործման և պահպանման, կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքով, համայնքի քաղաքաշինական կանոնադրությամբ սահմանված պահանջների կատարման նկատմամբ.
- իրականացնում է համայնքի սեփականություն հանդիսացող շենքերի ու շինությունների հաշվառումը և բաշխումը, կազմում է սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը, դրանք ներկայացնում է համայնքի ավագանու հաստատմանը.
- կազմակերպում է համայնքի բնակավայրերի բարեկարգումըև կանաչապատումը.
- կազմակերպում է հանգստի հանրային վայրերի խնամքն ու պահպանությունը.»[18]:

«Հողօգտագործման բնագավառում համայնքի ղեկավարը՝

- օրենքով սահմանված դեպքերում և կարգով կազմում է համայնքների հողերի օգտագործման սխեմաներն ու քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը և ներկայացնում համայնքի ավագանու հաստատմանը.
- մշակում և կազմում է համայնքի սեփականություն հանդիսացող հողերի կառավարման ամենամյա և հնգամյա ծրագրերը, որոնք կազմում են համայնքի հնգամյա զարգացման ծրագրի բաղկացուցիչ մասը, և դրանք ներկայացնում համայնքի ավագանու հաստատմանը.
- համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին, հողերի օգտագործման սխեմաներին համապատասխան, համայնքի ավագանու համաձայնությամբ և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը.
- օրենքով սահմանված կարգով վերահսկողություն է իրականացնում համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործման, հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ.
- օրենքով սահմանված դեպքերում և կարգով կանխարգելում, կասեցնում և վերացնում է ապօրինի հողօգտագործումները.
- իրականացնում է համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի բարելավման աշխատանքներ.»[19]:

Նշված իրավակարգավորումները փաստում են, որ տեղական ինքնակառավարման մարմինները ունեն բավարար լիազորություններ և օժտված են պատասխանատվությամբ լիարժեքորեն իրականացնելու հանրային նշանակության (համայնքային սեփականություն

[18] «ՏԻ մասին» ՀՀ օրենք, հոդված 42, մաս 1-ին

[19] «ՏԻ մասին» ՀՀ օրենք, հոդված 43, մաս 1-ին

հանդիսացող և/կամ համայնքի կողմից նպատակային կերպով օտարվող) տարածքների ստեղծման, պահպանության, պաշտպանության և վերահսկողության գործառույթներ:

Իբրև տեղական ինքնակառավարման հիմնական սկզբունքի ամրագրում՝ օրենսդրությունը ապահովում է նաև համայնքի բնակչության (քաղաքացիների) կողմից ինչպես այդ գործընթացներին տեղեկացվածությունը, այնպես էլ դրանց լիարժեք մասնակցությունը, կառավարումը և վերահսկողությունը:

Ի լրումն ՀՀ օրենսդրության, Երևանի ավագանու որոշմամբ (2009թ. նոյեմբերի 18-ի N 36-Ն) **սահմանվել են կանաչ տարածքների պահպանման և օգտագործման Կանոնները**: Իրավական ակտում գործածվում է ***«ընդհանուր օգտագործման տարածքներ»*** հասկացությունը, որի պարագայում նշվում են *զբոսայգիները, պուրակները, պարտեզները, ծառուղիները, ճեմելիքները, բուլվարները* և այլն: Սահմանումը մոտ է «հանրային տարածքի» հասկացության ծավալին:

Ամփոփելով վերոգրյալը, կարելի է ասել՝

1. Հանրային տարածքի պահպանության և օգտագործման հարցերը ՀՀ օրենսդրությամբ ընդհանուր առմամբ կարգավորված են: **ՀՀ սահմանադրությունը, «Քաղաքաշինության մասին», «ՏԻՄ մասին» ՀՀ օրենքները**, խնդրո առարկային անդրադառնալով, կիրառում են ***«շրջակա միջավայր», «կենսագործունեության միջավայր», «կանաչ տարածքներ»*** հասկացությունները, որոնք թեև ամբողջապես նույնական չեն ***«հանրային տարածքի»***՝ որպես քաղաքային համակեցության միջավայրի՝ սույն հետազոտության իմաստով կիրառվող եզրույթի, այնուհանդերձ ընդհանուր առմամբ արտահայտում են դրա բովանդակային ընկալումը, կիրառությունը և իրավական կարգավորումների դաշտը:

2. Օրենսդրությունն ամրագրում է ***«տարածքի գոտիավորում»*** կարևոր հասկացությունը, որով ըստ էության սահմանվում են *համայնքի կամ դրա առանձին հատվածների տարածքների, հողամասերի և այլ անշարժ գույքի օգտագործման պարտադիր պահանջները, դրանց իրավական ռեժիմին, նպատակային ու գործառնական նշանակությանը, թույլատրված օգտագործումներին համապատասխան:*

3. Օրենսդրական կարգավորումները սահմանում են այս բնագավառում ***պետական և ՏԻ մարմինների պարտականությունները***, միևնույն ժամանակ ***քաղաքացիների համար վարքագծի նորմերը***, որոնց պարագայում կապահովվի շրջակա միջավայրի (կենսագործունեության միջավայրի) պահպանությունն ու պաշտպանությունը:

4. Վարքագծի պարտադիր նորմերին չհետևելը թե քաղաքացիների, թե պետական (ՏԻ) մարմինների համար առաջացնում է վարչական կամ քրեական պատասխանատվություն: Օրենսդրական համապատասխան կարգավորումները նույնպես տրված են (**Վարչական իրավախախտումների մասին ՀՀ օրենք, ՀՀ քրեական օրենսգիրք**): Նույնը վերաբերում է քաղաքաշինական նորմերին, համայնքների գլխավոր հատակագծերին, հողերի գոտիավորմանը, հողաշինարարական և կառուցապատման աշխատանքների օրենսդրական կարգավորումներին: ՏԻ մարմինների ուղղակի պարտականությունն է *կանխել և կասեցնել ապօրինի (ինքնակամ) հողազավթումները և շինարարությունը*, վերահսկել հողերի, շենքերի, շինությունների նպատակային օգտագործումը, համայնքային սեփականություն համարվող գույքի պահպանումն ու շահագործումը և այլն: *(Բերվում են օրինակներ)*

5. Հանրային տարածքի «հանրային ընկալումը», «ինքնակամներ», հետխորհրդային մշակույթի (ընկալման) իներցիան: Մասնավորի, անձնականի և հանրայինի հատույթները. «առաձգական» իրականություն

Հանրային տարածքի հանդեպ մարդկանց (քաղաքացիների) վերաբերմունքը, ապա կոնկրետ գործողությունը, վարքը մեծապես պայմանավորված է այդ տարածքի հանդեպ ունեցած նրանց ընկալմամբ: Իմ ծավալուն հոդվածաշարերից մեկում[20] անդրադարձել էի հետխորհրդային իրականության մշակութային ասպեկտներին և հետխորհրդային մարդու (պոստսովետիկուս) հասարակական ընկալումներին և դրանց ունեցած ազդեցությանը մեզանում առկա հանրային հասարակական բազմաթիվ խնդիրների վրա: Մասնավոր սեփականության բացակայության պարագայում հանրային սեփականությունից ճարպկորեն «օգտվելը», հնարավորության դեպքում՝ գողանալը «խորհրդային» մարդու (այնուհետ նաև՝ հետխորհդային) վարքաբանական կայուն մոդել էր: Ներկայումս «հանրայինի»՝ որպես «ոչ մեկին չպատկանող տարածքի» հանդեպ վերաբերմունքը ընդհանուր առմամբ պահպանվել է, և դրա վառ ապացույցը, թերևս, հանրային նշանակության տարածքների հանդեպ ձևավորված լայն սպառողական, վատնողական վերաբերմունքն է, ըստ որում թե՛ շարքային քաղաքացիների (մարդկանց), թե՛ իրավասու պետական մարմինների կողմից: *(Բերվում են օրինակներ):*

Հանրային հասարակական նման ընկալման, վերաբերմունքի՝ մի կողմից, և պետական (ՏԻ) իրավասու մարմինների կողմից իրենց իրավասության և պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման (երբեմն՝ ամենաթողության ու կամայականությունների հասնող վիճակը), մյուս կողմից, պարագայում հանրային շահը (տվյալ դեպքում՝ տարածքը) դառնում է իրավիճակի առաջին զոհը, որը սպառվում է, վատնվում, անխնա յուրացվում, դառնում սեփականատիրական և մասնավոր նկրտումների թիրախ: Այս պարագայում մաքրվում, ջնջվում են մասնավորի, անձնականի և հանրայինի հատույթները, առաջ է գալիս «առաձգական» տարածական իրականությունը:

90-ականների կեսերից ամբողջ երկրով մեկ, հատկապես խոշոր քաղաքներում մասնավոր բիզնես-գործունեության ներքո սկսեցին սնկի պես աճել ***«բուդկաները» (կրպակները)***, որոնք հետագայում մետաղականից վերածվեցին սկզբում՝ ***քարաշեն փոքրիկ խանութների***, այնուհետև ընդարձակվեցին դարձան ***մարկետներ***՝ զավթելով նորանոր հանրային տարածքներ): Այդ խանութներն ու մարկետները կառուցվում էին քաղաքաշինական և իրավական գործընթացների

[20] https://www.aravot.am/2018/03/26/945103/

տրամաբանությանը **«հակառակ հաջորդականությամբ»**[21]: Սկզբում կառուցվում էին, հետո՝ օրինականացվում՝ փաստի ուժով: Առաջ եկավ մեր իրականության մեջ *իրավական և քաղաքաշինական առումով թերևս աբսուրդային մի հասկացություն՝* ***ինքնակամ շինությունը:***[22]

Խանութների և կրպակների ապօրինի շինարարությանը զուգահեռ լայն տարածում գտավ ***ապօրինի բնակարանաշինությունը***: Քաղաքային բնակֆոնդի սեփականաշնորհմանը զուգահեռ «հնարամիտ» մարդկանց մոտ «գաղափար ծագեց» ընդհանուր, հանրային տարածքների հաշվին մեծացնել սեփական բնակարանի մակերեսը: Լայն տարածում գտավ «բալկոնը առաջ տալ» «առաջադեմ» հասկացությունը: Բազմահարկ շենքի բնակիչները բալկոնը «առաջ էին տալիս» գրեթե «սինքրոն»՝ առաջինից մինչև հինգերորդ (վեցերորդ… ութերորդ…) հարկ՝ կառուցելով և երեսապատելով շենքի նոր ֆասադը սեփական ֆինանսական, ճարտարապետական և գեղագիտական հնարավորություններին ու ճաշակին համապատասխան:

Ապօրինի զավթվեցին բազմաբնակարան շենքերին հարակից բակային տարածքները, ծառուղիները, այգիները, պուրակները: Մանկական խաղահրապարակների հաշվին ապօրինի կառուցվեցին անթիվ ու անհամար ***ավտոտնակներ*** (հաճախ՝ երկհարկանի, տձև, քաղաքաշինական նորմերին և չափանիշերին խիստ անհամապատասխան): Ավելորդ է խոսել ինքնակամների ճարտարապետական լուծումների և ճաշակի մասին:

2000-ականների կեսերին ինքնակամ շինությունների թվաքանակը և ծավալը այնքան մեծացավ, որ անհրաժեշտություն առաջացավ օրենսդրորեն կարգավորել դրանց իրավական կարգավիճակի և սեփականության հարցերը: 2006 թ. մայիսի 18-ին միաժամանակ ընդունվեց ՀՀ կառավարության երկու որոշում՝ *«Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին»* (ՀՀ ԿՈ N 731-Ն) և *«Ինքնակամ կառույցների օրինականացման եվ տնօրինման կարգը հաստատելու մասին»* (ՀՀ ԿՈ N 912-Ն): Իրավական կարգավորմամբ փորձ էր արվում կանոնակարգել խնդիրը, պետական և համայնքային տարածքների նկատմամբ վերականգնել այդ մարմինների կողմից սեփականության իրավունքը և հսկողությունը:

[21] Ճիշտ հաջորդականությունն է՝ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից՝ հողահատկացում, նախագծի հաստատում, շինթույլտվություն, շինարարության գործընթաց, գույքի նկատմամբ սեփականության իրավունքի հաստատում:

[22] Աբսուրդի հետ մեկտեղ՝ այս ամենի զավեշտն այն էր, որ այդ ինքնակամների հետ կապված միջազգային փորձագետների հետ խորհրդատվական քննարկումները անարդյունավետ և հումորային ընթացք էին ստանում, քանի որ մեր եվրոպացի գործընկերները այդպես էլ չէին կարողանում հասկանալ՝ այդ ի՞նչ է «ինքնակամ շինությունը» ☺

Հարկ է փաստել, որ ինքնակամների տարերային աճը առաջին հերթին տեղական իշխանությունների անգործության և պարտականությունների չկատարման հետևանք է: Սա նաև ունի օբյեկտիվ պատճառ՝ պայմանավորված տեղական ինքնակառավարման ինստիտուտի նոր ներդրման, հանրային տարածքների վերահսկողության հարցերում տեղական և համայնքային իշխանությունների կողմից իրենց լիազորությունների և պարտականությունների չիմացության և չգիտակցվածության:

Անհրաժեշտ է նշել նաև, որ ապօրինի գործընթացները ուղեկցվել են կոռուպցիոն բազմաթիվ դրսևորումներով, «սեփականատերերի» կողմից տեղական իշխանությունների հետ ունեցած «գործարքներով», որոնց արդյունքում (քրեական հանցագործությունից զատ) մեծ հաշվով տուժել են այդ նույն համայնքները, համայնքի հանրային տարածքները և բնակչությունը, որը զրկվել է ընդհանուր օգտագործման զգալի տարածքներից:

Արդեն խոսվեց բազմաբնակարան շենքերում բնակմակերեսի մեծացման արատավոր պրակտիկաների մասին («բալկոնների առաջ տալու»): Նշվեց, որ ապօրինի այդ գործընթացները ժամանակին չեն կանխվել իրավասու մարմինների կողմից: Հարկ է նշել, որ զարմանալիորեն, երևութի դեմ հանդես չեկավ (կամ գրեթե հանդես չեկավ) հենց տվյալ շենքի բնակչությունը: Որովհետև բազմաբնակարան շենքի հիմնական հատակագծի, ֆասադի, կրող կոնստուկցիաների խեղափոխումները ունեն ոչ միայն զուտ իրավական, ճարտարապետական և գեղագիտական հետևանքներ: Այն ուղղակիորեն կապված է շենքի կառուցման և շահագործման շինարարական նորմատիվների, սեյսմակայունության, վթարայնության հետ՝ դրանից բխող հետևանքներով:

Եվ նորից հարկ է անդրադառնալ հետխորհրդային մարդու սոցիալ-մշակութային կերպարին, վարքաբանությանը և ավանդական հասարակությանը բնորոշ այնպիսի մշակութաբանական խեղափոխված կատեգորիաներին, ինչպիսիք են՝ «լավ հարևանությունը», «բարի կամեցողությունը», «գործ չտալը», «ուրիշի վատը չկամենալը» և այլն:

Վերը նշված գործընթացների և այդ ժամանակներում քաղաքացիական ակտիվության բացակայության պարագայում առաջ եկավ բավականին տխուր մի պատկեր, երբ քաղաքները (հատկապես Երևանը) փաստացի զրկվեցին հանրային զգալի տարածքներից, որոնք ապօրինի կերպով զավթվեցին առանձին անձանց կողմից, ապա՝ օրինականացվեցին որպես մասնավոր սեփականություն: (*Հրազդանի կիրճ, ռեստորաններ, սրճարաններ, Օպերայի հարակից տարածք, Մաշտոցի պուրակ, Մոնումենտի այգի և այլն*):

6. Մասնակցային կառավարում, կամ «Մենք ենք տերը մեր երկրի»

Նշված իրավիճակից որպես ելք՝ առաջարկվում է մասնակցային կառավարման (մասնակցային ժողովրդավարության) ինստիտուտների լայն կիրառումը ինչպես պետական, այնպես էլ (և հատկապես) ՏԻ կառավարման համակարգերում: Մասնակցային ժողովրդավարությունը որպես ուղղակի ժողովրդավարության բաղադրիչ հնարավորություն է ընձեռում մի կողմից քաղաքացիական ներգրավվածության և նախաձեռնությունների միջոցով իրազեկվելու և արդյունավետ վերահսկելու պետական և ՏԻ մարմինների պարտականությունների պատշաճ կատարումը, մյուս կողմից՝ քաղաքացիների կամավոր ակտիվությունը և մասնակցությունը առաջ են բերում հանրային ընդհանուր շահի զգացում և գիտակցում, հանրային տարածքի՝ որպես հանրային բարիքի ընկալում, ձևավորելով հանրային տարածքի օգտագործման, պահպանության և պաշտպանության մշակույթ, էթիկայի ու վարքագծի նորմեր, այլ կերպ ասած՝ քաղաքային մշակույթի կարևոր տարրեր և բաղկացուցիչներ: *(թեման շատ լայն և ընդգրկուն է, ունի ծավալվելու մեծ փիրույթ)*

Օգտագործված գրականություն

1. ՀՀ սահմանադրության փոփոխություններ, 2015թ.
2. «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-217), 05.05.1998թ.
3. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք (ՀՕ-337), 07.05.2002թ.
4. «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք
5. Մարգարյան Լ. Ն., «Հանրային տարածքների փոխակերպումը Երևանում», «Ազգագրություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2016
6. Х. Арендт, «О деятельной жизни» (Vita Activa, 1958),
7. Н. Лебедева, Терапия публичного человека: От Арендт к Сеннету, Рецезия на книгу: Сеннет Р. Падение публичного человека., 2012,
8. Ю. Хабермас, «Теория коммуникативного действия» (Theorie des kommunikativen Handelns, Suhrkamp, 1981),
9. Берт ван ден Бринк, Парадигма признания в социальной философии: Аксель Хоннет; статья, перевод с англ., Институт социальных и политических наук, 2014.
10. Р. Сеннет, Падение публичного человека, (The Fall of Public Man, 1977)
11. https://en.wikipedia.org/wiki/Occupy_Wall_Street
12. New Ways of Thinking About Space, Richard Sennett, The Nation, 05.09.2012, https://www.thenation.com/article/new-ways-thinking-about-space/
13. Ս. Անտինյան, «Հետխորհրդային իրականության մշակութային ասպեկտները, կամ պոստսովետիկուսի համախտանիշի ճիրաններում (քաղաքական Էսսե), հոդվածաշար (3 հոդված), Առավոտ օրաթերթի ինտերնետային կայք, մարտ-ապրիլ, 2018, https://www.aravot.am/2018/03/26/945103/
14. Բնակավայրերի ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքների եվ դրանց կառավարման գործընթացների հանրային մոնիտորինգի մեթոդական ձեռնարկ, European Endowment for Democracy, EED support, «Երրորդ բնություն» հասարակական կազմակերպություն, կազմողներ՝ Ռ. Մխիթարյան, Գ. Պետրոսյան, Գյումրի, 2014